ՕԴԻ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Օդի խոնավությունը կարևոր է կենդանական և բուսական աշխարհում: Օրգանիզմների կենսագործունեության համար բարենպաստ չէ ինչպես ցածր, այնպես էլ բարձր խոնավությունը: Մարդու առողջության համար այն ունի մեծ նշանակություն, քանի որ դրանից է կախված օրգանիզմի ջերմափոխանակությունը շրջապատի հետ: ջերմաստիճանում մարդու առողջության համար նպաստավոր է հարաբերական խոնավությունը: Ցածր խոնավության դեպքում, արագ գոլորշիացման հետևանքով, քթի լորձաթաղանթի, կոկորդի և թոքերի մակերևույթները չորանում են, որը կարող է հանգեցնել առողջական վիճակի վատացման:

Օդի խոնավությունը կարևոր է նաև շատ տեխնոլոգիական պրոցեսներում, օրինակ՝ մանվածքային, հրուշակեղենի չորացման արտադրություններում, գրապահոցներում և թանգարաններում՝ ցուցանմուշների պահպանման համար:

Օդի խոնավությունն իմանալը կարևոր է օդերևութաբանության մեջ՝ եղանակի կանխագուշակման համար, որն անհրաժեշտ է գյուղատնտեսության, տրանսպորտի և տնտեսության այլ բնագավառների բնականոն գործունեության համար:

Աղյուսակ 1

Հագեցած գոլորշու ճնշման կախումը *t* ջերմաստիճանից

t, °C	*p*, կՊա	ρ գ/մ³	*t*, °C	*p*, կՊա	ρ գ/մ³
-5	0,40	3,2	11	1,33	10,0
0	0,61	4,8	12	1,40	10,7
1	0,65	5,2	13	1,49	11,4
2	0,71	5,6	14	1,60	12,1
3	0,76	6,0	15	1,71	12,8
4	0,81	6,4	16	1,81	13,6
5	0,88	6,8	17	1,93	14,5
6	0,93	7,3	18	2,07	15,4
7	1,0	7,8	19	2,20	16,3
8	1,06	8,3	20	2,33	17,3
9	1,14	8,8	25	3,17	23,0
10	1,23	9,4	50	12,3	83,0